ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի բանաձևերով կամ դրանց համաձայն հրապարակված ահաբեկչության հետ կապված անձանց ցանկերի ավտոմատ համեմատման ալգորիթմի կիրառության վերաբերյալ

Սույն նվազագույն պահանջները ներկայացվում են համաձայն «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի, որը սահմանում է, որ Միավորված ազգերի կազմակերպության անվտանգության խորհրդի բանաձևերի կամ դրանց համաձայն հրապարակված ահաբեկչության հետ կապված անձանց ցանկերում ներառված ահաբեկչության հետ կապված անձանց ուղակիորեն կամ անուղակիորեն պատկանող կամ նրանց կողմից վերահսկվող գույքը անմիջապես և առանց նշված անձանց տեղյակ պահելու ենթակա է սառեցման հաշվետվություն տրամադրող անձանց կողմից:

Օրենքի վերոգրյալ դրույթի կատարումը ապահովելու նպատակով ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնի կողմից մշակվել և ներկայացվում է ահաբեկչության հետ կապված անձանց ավտոմատ համեմատման նվազագույն պահանջները սահմանող ալգորիթմ, որտեղ նկարագրված են առաջնային և խորացված դիտանցման ժամանակ իրականացվող քայլերը՝ ըստ հաջորդականության (Տե՛ս Հավելված 1):

Առաջնային և խորացված դիտանցման ալգորիթմը նկարագրող քայլերում ներառված օրինակներում, օգտագործվում են մտացածին իրավաբանական և ֆիզիկական անձանց տվյալներ:

Համաձայն «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի համաձայն սույն փաստաթղթի հավելվածով սահմանված գործողությունների և վերլուծությունների արդյունքները փաստաթղթավորվում են՝ թղթային կամ էլեկտրոնային տարբերակով և պահպանվում են առնվազն 5 տարի:

Հավելված 1

Առաջնային և խորացված դիտանցման ալգորիթմը նկարագրող քայլեր

1-ին քայլ. Նախապատրաստել դիտանցման տվյալները

Մինչև դիտանցման իրականացումը, անհրաժեշտ է դիտանցման ենթակա տվյալները, որոնք ներառում են ընկերության տվյալների շտեմարանում առկա գործարքների կամ գործարար հարաբերություններին մասնակցող ֆիզիկական և իրավաբանական անձանց վերաբերյալ տվյալներ.

ա) մաքրել կետադրական և հատուկ նշաններից,

բ) տառային նշանները բերել մեծատառերի,

գ) անտեսել բացառման ցանկում[1] ներառված տառային համակցությունները (կիրառվում է միայն խորացված դիտանցման ժամանակ):

2-րդ քայլ. Կիրառել առաջնային դիտանցում

Համընկնում առկա է եթե.

2.1 Սև ցուցակում ներառված ֆիզիկական անձի անձնագրի դաշտերից առնվազն մեկը ամբողջովին համընկնում է ֆիզիկական անձի անձնագրի համարի հետ.

Օրինակ 1՝ *«AM012-3478» անձնագիրը 1-ին քայլից հետո հավասար է Սև ցուցակում ներառված անձնագրի դաշտին՝ «AM0123478»:*

2.2 Ֆիզիկական անձի անվանման բոլոր մասերից յուրաքանչյուրը՝ ազգանուն, անուն և հայրանուն (եթե առկա է) ամբողջությամբ համընկել է սև ցուցակում ներառված ֆիզիկական անձի՝ անուն պարունակող դաշտերից (<First_name>, <Second_name>, <Third_name>, <Fourth_name>) որևէ մեկի հետ:

Օրինակ 2՝ *«MOHMUD ABDUL» անուն, ազգանուն ամբողջությամբ համընկել է Սև ցուցակում ներառված՝* <First_name>, <Second_name>, <Third_name>,<Fourth_name> *դաշտերի՝ «MOHMUD ALI ABDUL» հետ:*

---

[1] Սահմանվում է ընկերության կողմից

2.3 Ֆիզիկական անձի անվանման բոլոր մասերը (ազգանուն, անուն և հայրանուն) համատեղ, փորձարկելով տարբեր հերթականությամբ , ամբողջությամբ համընկել է Սև ցուցակում ներառված ֆիզիկական անձի անուն պարունակող այլ դաշտերից (Alias_name կամ Sort_key) առնվազն մեկի հետ:

Օրինակ 3՝ *«MUSTAFA AL RAHIM» ֆիզիկական անձի անունը և ազգանունը ամբողջությամբ համընկել են Սև ցուցակում ֆիզիկական անձի անուն պարունակող այլ դաշտերից* (Alias_name կամ Sort_key)*«MUSTAFAALRAHIM» որևէ մեկի հետ:*

2.4 Իրավաբանական անձի անվանումը ամբողջովին համընկել է Սև ցուցակում ներառված իրավաբանական անձի անվանում դաշտերից որևէ մեկ հետ:

Օրինակ 4՝ «INTERNATIONAL-CONSULTING LLC» *իրավաբանական անձի անվանումը ամբողջությամբ համընկել է Սև ցուցակում իրավաբանական անձի անուն պարունակող դաշտերից* « INTERNATIONAL CONSULTING LLC.» *որևէ մեկի հետ:*

3-րդ քայլ. Կիրառել խորացված դիտանցում

Համընկնում առկա է եթե.

3.1 Սև ցուցակում ներառված ֆիզիկական անձի անունի և ազգանունի դաշտերի միավորված համակցության (ուղիղ և հակառակ հերթականությամբ) և Սև ցուցակում ներառված անունի և ազգանունի միավորված համակցության իրար համընկնող ընդհանուր մասի նիշերի քանակը միաժամանակ գերազանցել է և՛ Սև ցուցակի, և՛ տվյալների շտեմարանի համապատասխան տվյալի բաղկացուցիչ նիշերի քանակի 50%-ը:

Օրինակ 5՝ *«ԿԱՐՈ ՏԵՐ-ՊՈՂՈՍՅԱՆ ԱՐԱՅԻ» ֆիզիկական անձի անունը և ազգանունը համընկել է Սև ցուցակում ներառված ֆիզիկական անձի՝ անուն պարունակող դաշտերից (<First_name>, <Second_name>, <Third_name>, <Fourth_name>) «Պողոսյան Կարապետ»-ի հետ, քանի որ տվյալների շտեմարանում՝ «ԿԱՐՈՏԵՐՊՈՂՈՍՅԱՆԱՐԱՅԻ» 21 նիշերից կազմված համակցությանը՝ «ՊՈՂՈՍՅԱՆԿԱՐ» 11 նիշով (հակառակ հերթականությամբ) համընկել է Սև ցուցակում՝ «ՊՈՂՈՍՅԱՆԿԱՐԱՊԵՏ» 15 նիշով անուն ազգանվան հետ: Այսինքն՝ համընկնող ընդհանուր մաս կազմող՝ «ՊՈՂՈՍՅԱՆԿԱՐ» 11 նիշով համակցությունը 50%-ից ավելի է և՛ Սև ցուցակի, և՛ տվյալների շտեմարանի համապատասխան տվյալի բաղկացուցիչ նիշերի քանակից:*

3.2 Սև ցուցակում ներառված իրավաբանական անձի անվանում պարունակող դաշտերի միավորված համակցության (ուղիղ և հակառակ հերթականությամբ) և Սև ցուցակում գրանցված անունի և ազգանունի միավորված համակցության իրար համընկնող

ընդհանուր մասի նիշերի քանակը միաժամանակ գերազանցել է և՛ Սև ցուցակի, և՛ տվյալների շտեմարանի համապատասխան տվյալի բաղկացուցիչ նիշերի քանակի 50%-ը:

Օրինակ 5՝ *«ALL MOHMUD RAGABZ LLC CORP» իրավաբանական անձի անվանումը համընկել է Սև ցուցակում ներառված իրավաբանական անձի անուն պարունակող դաշտերից «ABD MOHMUD RAGAB ABDEL LTD» որևէ մեկի հետ, քանի որ տվյալների շտեմարանում՝ «ALLMOHMUDRAGABZ» 15 նիշերից (հաշվի առնելով բացառման ցանկը տես՝ կից հավելված 1) կազմված համակցությունը «MOHMUDRAGAB» 11 նիշով համընկել է սև ցուցակում՝ «ABDMOHMUDRAGABABDEL» 19 նիշով (հաշվի առնելով բացառման ցանկը, տես՝ կից հավելված 1) անվանման հետ: Այսինքն՝ համընկնող ընդհանուր մաս կազմող՝ «MOHMUDRAGAB» 11 նիշով համակցությունը 50%-ից ավելի է և՛ Սև ցուցակի, և՛ տվյալների շտեմարանի համապատասխան տվյալի բաղկացուցիչ նիշերի քանակից:*